

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՒՄԱՓԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՇԱԿ ԲԱԼԱՅԱՆ

Առօրյայում հաճախ ենք լսում, որ որևէ անձ պատասխանատու է ինչ-որ բանի համար այն դեպքում, երբ գտնում են, որ նա պետք է պատասխան տա, այսինքն՝ ստանձնի ինչ-որ անցանկալի իրավիճակ հաղթահարելու, ինչ-որ կորուստ փոխհատուցելու գործը: Այլ կերպ ասած՝ առօրյայում ասում են՝ անձը պատասխանատու է այն դեպքում, երբ գտնում են, որ տվյալ իրավիճակում ճիշտ կլինի, որ նա ստանձնի ինչ-ինչ գործողությունների հետևանքներ վերացնելու գործը: Առօրեական կամ գործնական իմաստով պատասխանատվություն կրող սուբյեկտը որոշվում է առաջին հերթին սոցիալական-իրավական հանգամանքների հիման վրա:

Առօրյայում ասում են, որ անձը մեղավոր է ինչ-ինչ հանգամանքի համար այն ժամանակ, երբ գտնում են, որ նրա որոշակի գործողությունների հետևանքով ստեղծվել է ինչ-որ անցանկալի իրավիճակ: Առօրեական կամ գործնական իմաստով «պատասխանատու լինել» և «մեղավոր լինել» արտահայտությունների այս սեղմ նկարագրությունից բխում է, որ կարող են լինել դեպքեր, երբ ինչ-որ անցանկալի իրավիճակի համար մեղավոր է մի անձ, սակայն այդ իրավիճակը վերացնելու համար պատասխանատու է բոլորովին այլ անձ: Օրինակ, որևէ ավտովթարի համար կարող է մեղավոր լինել մեքենայի վարորդը, իսկ վթարի ենթարկված մեքենան փողոցից տեղափոխելու և փողոցի նորմալ երթևեկությունը հնարավորին չափ սեղմ ժամկետում վերականգնելու համար պատասխանատու է ինչ-որ տեսչություն:

Բարոյական առումով պատասխանատու լինել նշանակում է բարոյական ինչ-ինչ սկզբունքի համաձայն պարտավորված լինել կատարելու որոշակի քայլ: Այն քայլերը, որոնք պարտավոր է իրականացնել անձը, բխում են բարոյականության սկզբունքներից: Դրույթը մեկնաբանելու համար որպես այդպիսի սկզբունք կարելի է կիրառել հետևյալը. «Յուրաքանչյուր անձի բարոյական պարտավորությունն է օգնել ու հարգել իր ընկերոջը և կամենալ նրա բարին»: Եթե այս դրույթն իսկապես բարոյականության սկզբունք է, անձը բարոյական պատասխանատվություն ունի որոշակի վարք կամ դիրքորոշում դրսևորելու իր ընկերոջ նկատմամբ (պարտավոր է նրան օգնել, հարգել և կամենալ նրա բարին):

Այսպիսով, կարելի է առանձնացնել «պատասխանատվություն» հասկացության երկու իմաստ՝ առօրեական (գործնական) և բարոյական. անձը կարող է ունենալ բարոյական պատասխանատվություն՝ փոխհատուցելու հասցված վնասը, վերացնելու ինչ-որ անցանկալի վիճակ (պատասխանատվություն գործնական իմաստով) կամ բարոյական պատասխանատվություն ունենալ ուրիշի հետ իր հարաբերության բնույթից բխող բարոյական սկզբունքներին հետևելու (պատասխանատվություն զուտ բարոյական իմաստով): Եթե առօրեական իմաստով պատասխանատվություն

ընդ ենթադրում է հասցված որոշակի վնասի փոխհատուցում, ապա բարոյագիտական իմաստով պատասխանատվությունը ենթադրում է ոչ թե փոխհատուցում, այլ բարոյական որոշակի սկզբունքներին հավատարմություն: Համանման կերպով, բարոյական առումով մեղադրել չի նշանակում ակնկալել, որ անձը կտրամադրի որոշակի փոխհատուցում: Բարոյական առումով մեղադրել նշանակում է դատողություն կազմել այն մասին, որ գործող անձը խախտել է մեղադրողի հետ իր հարաբերության բնույթից բխող բարոյական որոշակի սկզբունք, և որի հիման վրա մեղադրողը բարոյական ազատություն ունի վերանայելու տվյալ անձի հետ իր հարաբերությունը: Այս դրույթը հարկավոր է պարզաբանել օրինակով: Ենթադրենք՝ ինչ-որ անձ շատ լավ գիտի, որ իր ընկեր Մ.-ն դիմում է ներկայացրել իր համար հույժ անհրաժեշտ և ցանկալի մի նոր աշխատանքի անցնելու համար, սակայն ներքուստ շատ մեծ ցանկություն ունի, որ Մ.-ն այդ աշխատանքը չստանա: Այս դեպքում աշխատանք փնտրողը հիմքեր ունի ընկերոջը բարոյական առումով մեղադրելու, քանի որ նա խախտել է իր հետ հարաբերությունից բխող բարոյական սկզբունքը (չի կամեցել իր ընկերոջ բարին), և, ըստ այդմ, նա բարոյական ազատություն կունենա վերանայելու տվյալ ընկերոջ հետ իր հարաբերությունը¹:

Պատասխանատվության և մեղավորության առօրեական և բարոյական այս իմաստների տարանջատումն անհրաժեշտ է մի շարք հարցեր պարզաբանելու համար:

Պատասխանատվություն և մեղք հասկացությունների վերաբերյալ բարոյագիտական շատ աշխատանքներ են գրվել, որոնք տարբեր հիմքերով բացառում են բարոյական պատասխանատվության և մեղքի հնարավորությունը: Ընդհանրապես ընդունված տեսակետ է, որ բարոյական պատասխանատվությունը հնարավոր է միայն ազատության առկայության դեպքում: Ենթադրվում է, որ անձը բարոյական առումով պատասխանատու է իր արարքների անցանկալի հետևանքները վերացնելու համար, կամ ուրիշները նրան բարոյական առումով մեղադրելու հիմքեր ունեն միայն այն դեպքում, եթե նա վարվել է ազատորեն: Ազատության և բարոյական պատասխանատվության փոխհարաբերության վերաբերյալ տեսակետները կարելի է բաժանել երկու մեծ խմբի: Առաջին տեսակետի համաձայն՝ բարոյական պատասխանատվության գոյության համար անհրաժեշտ է ազատություն, հնարավոր չէ ստեղծել մի այնպիսի տեսություն, որում անհակասական ձևով տեղ գտնեն, համատեղվեն մետաֆիզիկական անհրաժեշտությունը և բարոյական պատասխանատվությունը: Այս տեսակետը հայտնի է որպես ինկոմպատիբիլիզմ (incompatibilism): Երկրորդ տեսակետի համաձայն՝ բարոյական պատասխանատվությունը հնարավոր է անգամ այն դեպքում, երբ չկա ազատություն: Այս տեսակետը հայտնի է որպես կոմպատիբիլիզմ (compatibilism): Սույն հոդվածում ցույց կտրվի, որ բարոյական պատասխանատվության համար ազատությունն անհրաժեշտ չէ, և հետևաբար, եթե նույնիսկ աշխարհը պատճառավորված է կամ կանխորոշված աստվածային կամքով, բարոյական պատասխանատվությունը հնարավոր է:

¹ Տե՛ս **Scanlon, T. M.** Moral Dimensions: Permissibility, Meaning, Blame, Belknap Press of Harvard University Press, Cambridge, USA, 2008, էջ 138:

Ազատության և բարոյական պատասխանատվության կապը նկատելի և վերլուծել են դեռ վաղ միջնադարում: Հայտնի կշռադատություններից մեկն ունի հետևյալ կառուցվածքը. գոյություն ունի ամենակարող, ամենագետ, կատարյալ Աստված: Ավելին, այս աշխարհում ամեն ինչ կատարվում է Աստծո կամքով և ոչինչ չի կատարվում առանց նրա ինքնակամքի: Եթե Աստված կատարյալ է և ամենագետ, ապա նա անպայման ամեն ինչ գիտի այն մասին, թե ինչ է, օրինակ, 2050 թ. անելու այն անձը, որը ծնվելու է 2020 թ.: Այդ մարդը դեռ չի ծնվել, սակայն Աստված արդեն գիտի նրա կյանքի բոլոր մանրամասները, քանի որ նա, ըստ սահմանման, ամենագետ է: Այս դեպքում ինչպե՞ս է պետք հասկանալ 2020 թ. ծնված այդ մարդու որևէ (չարամիտ) արարք: Արդո՞ք սա Աստծո կա՞մքն էր, թե՞ ոչ: Կասկածից վեր է, որ տվյալ մարդը ընտրության հնարավորություն չուներ, նա ազատ չէր, քանի որ Աստված նախքան նրա ծնունդը գիտեր, որ նա կատարելու է ինչ-որ անցանկալի արարք, իսկ այդ արարքը կատարվելու է անհրաժեշտաբար, քանի որ հակառակ դեպքում (եթե այդ արարքը չկատարվի) կնշանակի, որ կատարյալ և ամենագետ Աստված ինչ-որ սխալ գիտելիքներ ունի, որն անհնար է ըստ սահմանման:

Կա այս փաստարկի բնագիտական նմանակը, որը կասկածի տակ է դնում բարոյական պատասխանատվության հնարավորությունը՝ հենվելով պատճառականության սկզբունքի վրա: Ըստ այս տեսակետի՝ ամեն ինչ ունի պատճառ: Մարդը բնության մի մասն է, նա ենթարկվում է բնական օրենքներին, որոնք գործում են պատճառականության սկզբունքի հիման վրա: Թեև այսօր մարդկությունը դեռ չի բացահայտել պատճառահետևանքային բոլոր կապերը և ի վիճակի չէ կատարել մարդու վարքը ճշգրտորեն կանխատեսելու համար անհրաժեշտ հսկայական աշխատանք պահանջող մաթեմատիկական հաշվարկներ, այնուամենայնիվ մարդու բոլոր գործողությունները, խոհերը, հույզերը և այլն պատճառավորված են, անցյալի ինչ-որ իրադարձության (իրադարձությունների) անհրաժեշտ հետևանք են: Այս տեսակետի տրամաբանական հետևություններից է, օրինակ, այն, որ այս տեքստում հեղինակի կատարած (և՛ ճշմարիտ, և՛ սխալ) պնդումները նույնպես անցյալում կատարված ինչ-որ իրադարձության (իրադարձությունների) հետևանք են, և եթե լիներ գիտակցության բավարար զարգացած տեսություն և դրան համապատասխան մաթեմատիկական վերլուծական համակարգ, հնարավոր կլիներ նախապես, օրինակ՝ անցյալ տարի, ճշգրտորեն կանխատեսել, թե ինչ պետք է գրված լիներ այս աշխատանքում: Նույն կերպ ամեն մի անցանկալի արարք հնարավոր է դառնում ներկայացնել որպես անցյալում (և պարզ չէ, թե զրոյական ժամանակը որը պետք է համարել) տեղի ունեցած ինչ-որ իրադարձության անհրաժեշտ հետևանք:

Պատասխանատվության հնարավորությունը բացառող երրորդ փաստարկը, որը որոշակի առումով հիշեցնում է երկրորդը, պատկանում է ամերիկացի հայտնի մտածող Գ. Ստրավսոնին: Նա ընդունում է, որ բարոյական պատասխանատվությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ անձը ինչ-որ քայլի դիմել է ազատորեն: Ազատությանը նա ավելացնում է անձի կատարած քայլերի գիտակցված, նպատակային լինելու պահանջը: Ռեֆլեքսորեն կամ սովորության համաձայն կատարված գործողությունները, ըստ Գ. Ստրավսոնի, փիլիսոփայական առումով հետաքրքիր չեն: Օրի-

նակ՝ հնագետն իր ընկերոջը ցույց է տալիս հազարամյակների պատմություն ունեցող սափորը, որը նոր են պեղել: Ընկերը նոր առարկաներն ուսումնասիրելիս սովորություն ուներ դրանք վերցնել ձեռքը: Եվ ահա նա, սովորության համաձայն, վերցնում է հնամյա սափորը և անսպասելիորեն կոտրում՝ ապրելով մեծ վիշտ: Պարզ է, որ առօրեական իմաստով նա մեղավոր է սափորը կոտրելու համար: Թե ով է գործնական իմաստով պատասխանատու կոտրված սափորի համար, ով պետք է փոխհատուցում տա կոտրված սափորի դիմաց, կորոշվի սոցիալական-իրավական հանգամանքների հիման վրա: Սափորը կոտրող անձին բարոյական առումով մեղավոր համարել հնարավոր կլինի միայն այն դեպքում, երբ ցույց տրվի, որ խախտել է որևէ բարոյական սկզբունք: Օրինակ, այն դեպքում, երբ գոյություն ունենա հետևյալ տիպի մի բարոյական սկզբունք. «Ոչ ոք չպետք է ձեռք տա նոր պեղված առարկաների», կամ «Ոչ ոք չպետք է սովորություն ունենա նոր առարկաներ ուսումնասիրելիս նրանց ձեռք տալու» և այլն: Քանի դեռ նման սկզբունք չկա, նրա արարքը չի կարելի որակել որպես բարոյական առումով պատասխանատու վարք: Առհասարակ, քանի դեռ նման սկզբունք չկա, նրա վարքը բարոյական առումով չէզոք է:

Սովորության հիման վրա կատարված գործողությունները բարոյական առումով չէզոք են, քանի դեռ դրանց վերաբերյալ բարոյական սկզբունք առկա չէ: Այդ իսկ պատճառով որոշակիորեն արդարացված է Գ. Ստրավսոնի կողմից, ազատությունից բացի, որպես պատասխանատվության նախադրյալ, գործողության գիտակցվածություն և նպատակայնություն պահանջելը: Գործողությունների գիտակցված և նպատակային պահանջն առաջ է բերում մի նոր խնդիր. մարդը իր գիտակցված, նպատակային գործողություններն ընտրում է իր կրթության, գիտելիքների, արժեքների, կարճ ասած՝ իր բնույթին համարժեք, և հետևաբար, որպեսզի անձն իրապես ազատ ընտրություն կատարի, անհրաժեշտ է, որ նա ինքը գիտակցված և նպատակային ձևով ընտրած լինի իր կրթությունը, գիտելիքները, արժեքները, այսինքն՝ իր բնույթը: Օրինակ՝ ենթադրենք ինչ-որ մեկն ունի որոշակի կրթություն, որոշակի գիտելիքներ, նախասիրություններ, իդեալներ և այլն, այսինքն՝ ունի որոշակի բնույթ: Դա նշանակում է, որ այդ մարդը իր արարքներում ազատ է միայն այն դեպքում, երբ նախքան արարք գործելը նպատակային և գիտակցված ձևով է ընտրել իր բնույթը (ազատորեն, առանց պարտադրանքի): Բայց որպեսզի մարդը կարողանա իր բնույթն ընտրել ազատորեն և գիտակցված ձևով, պետք է նախապես ունենա ինչ-որ մեկ այլ բնույթ²:

Այս երեք փաստարկները ներկայացնելուց հետո հարկ է վերանայել բարոյական պատասխանատվության և ազատության ենթադրյալ անհրաժեշտ կապը: Իսկապես, կարո՞ղ է արդյոք բարոյական պատասխանատվությունն անհնար լինել ազատության բացակայության դեպքում: «Ազատության բացակայությունը սույն քննարկման շրջանակներում ընդունվում է որպես ընտրության հնարավորության բացակայություն: Գործող անձը չունի ազատություն այն դեպքում, երբ նա չունի ընտ-

² Տե՛ս **Strawson, G.** The Impossibility of Moral Responsibility, *Philosophical Studies: An International Journal for Philosophy in the Analytic Tradition*, Vol. 75, No. 1/2, Free Will, Determinism, and Moral Responsibility (Aug. 1994), էջ 6-7:

րության հնարավորություն: Այս դեպքում վերը նշված հարցը կարելի է վերաճակերպել այսպես. կարո՞ղ է արդյոք մարդը բարոյական պարտականություն ունենալ ինչ-որ արարքի անցանկալի հետևանքները վերացնելու համար, կամ կարո՞ղ է արդյոք մարդը որևէ քայլով բարոյականության որևէ սկզբունք խախտել: Արևմտյան մի շարք մտածողներ, այդ թվում Յ. Գ. Ֆրանկֆուրտը և Թ. Մ. Սկանլոնը, այս հարցին, միանգամայն տարբեր հիմքերով, պատասխանում են դրականապես:

Ըստ Յ. Ֆրանկֆուրտի՝ անձը կարող է բարոյապես պատասխանատու լինել իր արարքի համար անգամ այն դեպքում, եթե այդ արարքն այլընտրանքներ չունենա³: Իր թեզը հիմնավորելու համար նա առաջարկում է մի մտավոր փորձ: Ենթադրենք՝ երկու մարդկանցից մեկն ունի արտասովոր ունակություններ և կարող է կարգալ մյուսի մտքերը: Նա կարող է նաև հարկադրել, որ մյուսը անի այն, ինչ ինքն է ցանկանում: Այս դեպքում նա կարող է մյուս մարդուն պարտադրել այնպիսի գործողություններ կատարել, որն ինքն է ցանկանում:

Պարզ է, որ այս իրավիճակում ամեն ինչ կատարվում է ճիշտ այնպես, ինչպես ցանկանում է մանիպուլյացիայի ընդունակ մարդը: Սակայն սա նշանակո՞ւմ է, արդյոք, որ մանիպուլյացիայի ենթարկված մարդն իր կատարած գործողությունների համար պատասխանատու չէ: Հարցին պատասխանելու համար պետք է դիտարկել երկու տարբերակ: Առաջին՝ ենթադրենք՝ նա ուներ որևէ մեկին ծաղիկներ նվիրելու ցանկություն, բայց ենթարկվելով մանիպուլյացիայի՝ ծաղիկներ նվիրելու փոխարեն սպանում է նրան: Այս դեպքում թվում է, որ նա այլընտրանք չունեի և չէր կարող չսպանել այդ անձին, քանի որ, ըստ պայմանի, նրա վարքն ուղղորդում էր մեկ ուրիշը: Երկրորդ՝ ենթադրենք, որ նա ունի ինչ-որ մեկին սպանելու ցանկություն, և այդ ցանկությունը համընկնում է նրա վարքը կառավարողի ցանկությանը: Այս դեպքում նույնպես սպանություն կատարողն այլընտրանք չունեի: Նա չէր կարող այլ կերպ վարվել, քանի որ նրա վարքն ուղղորդող մարդը ցանկանում էր, որ նա սպանի տվյալ անձին, սակայն այս դեպքում արդեն մարդասպանը լիովին պատասխանատու է իր արարքի համար⁴:

Այս մտավոր փորձի միջոցով Յ. Ֆրանկֆուրտը միանգամայն համոզիչ կերպով ցույց է տալիս, որ բարոյական պատասխանատվությունը հնարավոր է անգամ այն դեպքում, երբ անձն այլ կերպ վարվելու ընտրություն չունեի: Այս մտավոր փորձը պատասխան է տալիս բարոյական պատասխանատվության անհնարինության վերաբերյալ վերը նշված առաջին և երկրորդ փաստարկներին, սակայն չի պատասխանում Գ. Ստրավսոնի փաստարկին: Բարոյապես պատասխանատու է արդյոք մարդն այն փաստի համար, որ ցանկություն ուներ սպանություն գործելու: Չէ՞ որ, ըստ Գ. Ստրավսոնի փաստարկի՝ մարդու մեջ այդ ցանկությունը կարող էր առաջանալ նրա վերահսկողությունից միանգամայն դուրս գտվնող հանգամանքների բերումով՝ վատ միջավայր, վատ կրթություն, վատառողջ հոգեկան, որոնք իրականում փոխարինում են վերը նշված մտավոր փորձի մանիպուլյատորին:

³ Տե՛ս **Frankfurt, H. G.** Alternate Possibilities and Moral Responsibility, The Journal of Philosophy, vol. 66, № 23 (Dec. 4, 1969), էջ 829:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 835:

Այս երկրորդ փաստարկին պատասխան է առաջարկում Թ. Սկանլոնը: Հարցին պատասխանելուց առաջ նա անդրադառնում է ընտրության արժեքին: Ի՞նչ արժեք ունի ընտրելու հնարավորությունը: Ընտրելու հնարավորությունն ունի ինստրումենտալ արժեք. գործող անձը ենթադրաբար բոլորից լավ գիտի իր նախընտրություններն ու կարիքները և ավելի լավ կընտրի այն, ինչ իրեն ցանկալի է կամ անհրաժեշտ: Այն ունի նաև ներկայացուցչական արժեք, օրինակ՝ ամուսնական մատանի ընտրելիս կարևոր է ոչ միայն այն, թե ինչ նվեր է ընտրվում, այլև այն, թե ով է այդ նվերն ընտրում: Ընտրելու հնարավորությունն ունի նաև սիմվոլիկ արժեք. հասարակության ամեն մի լիիրավ անդամից հանրությունն ակնկալում է որոշակի որոշումներ կայացնելու կարողություն, և մարդիկ այդ որոշումները կայացնում են սեփական կարգավիճակն ընդգծելու համար: Անկախ այն բանից, թե այս աշխարհը միանշանակ պատճառավորված է, թե ոչ, ըստ Թ. Սկանլոնի՝ ընտրելու հնարավորությունը պահպանում է իր ինստրումենտալ, ներկայացուցչական և սիմվոլիկ արժեքները⁵: Ընտրելու հնարավորությունն իր ներկայացուցչական և սիմվոլիկ արժեքները պահպանում է նաև այն դեպքում, երբ գործող անձը կատարում է իրեն վնասող ընտրություններ. շատերը կգերադասեն վարվել ըստ սեփական նախընտրությունների և ունենալ փոքր արդյունքներ, քան թե ենթարկվել մեկ ուրիշի հարկադրանքին և ունենալ շատ ավելի մեծ արդյունքներ:

Նույնիսկ այն դեպքում, երբ անձն ընտրություն չունի, նա պատասխանատու է որոշակի գործողություններ կատարելու համար և կարող է մեղավոր համարվել որոշակի բարոյական սկզբունքներ խախտելու պատճառով: Եթե անգամ այս տիեզերքը պատճառավորված է, և առանց բացառության ամեն ինչ ունի իր պատճառը, ոչինչ չի խանգարում կազմել ճշմարիտ դատողություն այն մասին, որ ինչ-որ գործոն որոշակի իրադարձության պատճառն է, կամ որ ինչ-որ երկու իրադարձություններ միմյանց հետ պատճառական կապ չունեն: Այն, որ երբ որևէ գիտնական կազմում է այս դատողությունները, իհարկե, կլինի պատճառավորված, սակայն սա չի նշանակում, որ ճշմարիտ դատողություններ կազմելն անհնար է: Համանման կերպով, եթե անգամ տիեզերքում ամեն ինչ պատճառավորված է կամ կանխորոշված է աստվածային կամքով, բարոյական դատողությունները հնարավոր են (քանի որ շատ հաճախ դրանք կատարվում են), և ավելին՝ ճշմարիտ բարոյական դատողությունները բացառված չեն (կարելի է հույս ունենալ, որ մարդկության պատմության ընթացքում կատարված բարոյական որոշ դատողություններ, այնուամենայնիվ, ճշմարիտ են): Եթե այս աշխարհը միանշանակորեն պատճառավորված է կամ կանխորոշված աստվածային կամքով, ապա ապագա հանցագործները կկատարեն այն հանցանքները, որոնք պետք է կատարեն անհրաժեշտաբար, մարդիկ իրար առօրեական իմաստով պատասխանատու կամ մեղավոր կհամարեն այն իրավիճակներում, որոնցում պետք է պատասխանատու կամ մեղավոր համարեն անհրաժեշտաբար, իսկ բարոյագետները կկատարեն այն դատողությունները, որոնք պետք է կատարեն անհրաժեշտաբար: Աշխարհի

⁵ Տե՛ս **Scanlon, T. M.** What We Owe to Each Other, The Belknap Press of Harvard University Press, Cambridge, USA, 1998, էջ 252-253, 256:

միանշանակ պատճառավորվածության կամ աստվածային կամքով կանխորոշվածության վերաբերյալ դրույթները ոչ թե բացառում են պատասխանատվության հնարավորությունը, այլ ճիշտ հակառակը՝ պատասխանատվությունը դարձնում են անհրաժեշտ: Այս սկզբունքներից բխում է, որ անհրաժեշտ են և՛ առօրեական, և՛ բարոյական իմաստներով պատասխանատվությունն ու մեղադրանքը: Պատասխանատվության հնարավորությունը կարող է կասկածելի լինել միայն այն դեպքում, երբ պատճառականության և աստվածային կանխորոշման սկզբունքները չեն գործում:

Այս աշխարհը, այնուամենայնիվ, հնարավոր է, որ միանշանակ պատճառավորված կամ աստվածային կամքով կանխորոշված չէ: Մարդիկ ունեն որոշակի մետաֆիզիկական ազատություն, և նրանց վարքի, խոհերի, հույզերի համապատասխանությունը բարոյական սկզբունքներին գոնե որոշակիորեն կախված է անձից: Մետաֆիզիկական, սոցիալական կամ հոգեբանական ազատությունների սահմանափակումը փոփոխում է անձի պատասխանատվության բնույթը, սակայն, ինչպես արդեն ցույց տրվեց, չի կարող վերացնել այն:

Այս դրույթը մեկնաբանելու համար դիտարկենք մի օրինակ. բանկը կողպտողներն ատրճանակով սպառնում են զանձապահին և պահանջում գումար՝ խոստանալով, որ հակառակ դեպքում կսպանեն և՛ զանձապահին, և՛ բանկում գտնվող հաճախորդներին: Անգամ այս իրավիճակում զանձապահը բարոյական պատասխանատվություն ունի որոշակի քայլերի դիմելու (այլ հարց է, թե որոնք են այդ քայլերը), և այս դեպքում որոշակի քայլերի դիմելու համար անգամ կարող է մեղադրվել: Նույնիսկ նման իրավիճակում զանձապահի կատարած ընտրությունները կպահպանեն իրենց ինստրուկցիաները, ներկայացուցչական և սիմվոլիկ արժեքները: Ըստ Թ. Սկանլոնի՝ անգամ եթե նման իրավիճակում գտնվող զանձապահը կայացնի իր համար միակ հնարավոր ընտրությունը, ապա այդ ընտրությունը, միևնույն է, կունենա բարոյական նկարագիր, այն հնարավոր կլինի քննադատել բարոյական տեսանկյունից⁶: Եթե այս աշխարհն իսկապես պատճառավորված է կամ կանխորոշված աստվածային կամքով, այսպիսի իրավիճակում հայտնված զանձապահը, փաստորեն, «բարոյական» կլինի այն դեպքում, երբ իր «բախտը բերի», երբ այդ միակ հնարավոր ընտրությունը լինի հենց այն ընտրությունը, որը համապատասխանում է բարոյականության սկզբունքներին⁷: Սակայն ավելի հավանական է երկրորդ տարբերակը. այս աշխարհը միանշանակորեն պատճառավորված և կանխորոշված չէ, և զանձապահի բարոյական լինել-չլինելը՝ այդ իրադարձության ժամանակ բարոյականության սկզբունքներին հետևելու իր իրական կարողություններին համապատասխան վարվելը, գոնե որոշ չափով կախված է հենց իրենից: Հենց այս «որոշ չափն» է **պատասխանատվություն և մեղք** հասկացության առօրեական կամ գործնական և բարոյական իմաստների առանձնացման հիմքը: Ասվածը մեկնաբանելու համար կարելի է դիտարկել մեկ օրինակ. ենթադրենք՝ գործող անձը կատարել է որևէ անցանկալի արարք, օրինակ՝ գողություն: Այս դեպքում ճիշտ է արդյոք ակնկալել, որ նա կստանձնի,

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 285:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 294:

կամ ճիշտ է արդյոք նրան հարկադրել, որ ստանձնի այդ արարքի անցանկալի հետևանքները վերացնելու գործնական պատասխանատվությունը: Այս հարցերի պատասխանները կախված են բազմաթիվ հանգամանքներից՝ տվյալ անձի հոգեբանական նկարագրից, իրավիճակից, նպատակներից և այլն: Եթե նա հոգեկան հիվանդ է և տառապում է, օրինակ, կլեպտոմանիայով, ապա վերը նշված հարցը կարող է ստանալ բացասական պատասխան: Բացասական պատասխանի հիմքը կլինի այն, որ տվյալ անձը որևէ կերպ չէր կարող (կամ շատ փոքր չափով կարող էր) խուսափել այդ արարքից, նա «հանգամանքների գոհ է», և նրան միզուցե ճիշտ չէ հարկադրել վերացնելու իր արարքի անցանկալի հետևանքները: Մյուս կողմից, եթե տվյալ անձը հոգեպես առողջ է, ապա նա որոշ չափով (կամ համեմատաբար ավելի մեծ չափով) կարող էր խուսափել այդ արարքից, և ճիշտ է նրան հարկադրել այդ արարքի անցանկալի հետևանքները վերացնելու: Այնուամենայնիվ, անկախ անձի հոգեբանական առանձնահատկություններից, իրավիճակի յուրահատկություններից, անձի նպատակներից և այլն, անձը բարոյական առումով պատասխանատու է, քանի որ խախտել է բարոյական սկզբունք (չի կարելի գողանալ):

Այսպիսով, աշխարհի միանշանակ պատճառավորվածության կամ աստվածային կամքով կանխորոշվածության մասին պատկերացումները չեն բացառում բարոյական պատասխանատվության հնարավորությունը, ընդհակառակը՝ այն դարձնում են անհրաժեշտ: Անգամ եթե աշխարհը պատճառավորված կամ աստվածային կամքով կանխորոշված չէ, բարոյական պատասխանատվությունը և՛ գործնական իմաստով, և՛ բարոյական առումով հնարավոր է:

АРШАК БАЛАЯН – *Неизбежность моральной ответственности.* – Философские теории об однозначной причинности мира или о его детерминированности божественной волей не исключают этической ответственности человека. Наоборот, они делают её необходимой. Неважно, действует ли во Вселенной принцип однозначной причинности или она обусловлена некоей высшей волей, это не отрицает, а предполагает ответственность человека как в практическом, так и в этическом смысле.

ARSHAK BALAYAN – *The Inevitability of Moral Responsibility.* – Philosophic views of causality or determination of the world by divine will do not eliminate the possibility of moral responsibility. Quite the contrary, these views make the responsibility a necessity. Even if the world is causal or is determined by divine will, responsibility is possible both in its practical and ethical senses.